

# "ՀԱՅԱՑՔ"-Ը ՆԵՐԿԿԱՅԱՑՆՈՒՄ Է. Ադրբեջանի այսօրվա ցինիզմը բխում է ուժային կենտրոնների՝ մասամբ համանախագահների կեցվածքից

*Ներկայացնում ենք “Արմեդիա” ՏՎԳ հարցազրույցը “Հայացք” կիրառական քաղաքականության և հետազոտությունների վերլուծական կենտրոնի ղեկավար Կարեն Բեքարյանի հետ:*



*-Պարո՛ն Բեքարյան, շատ է խոսվում այն մասին, որ հայ-ադրբեջանական և դարաբաղա-ադրբեջանական սահմանի լարվածությունը միջնորդները՝ հատկապես Ռուսաստանը կարող են օգտագործել կողմերին խաղաղապահների տեղակայման անհրաժեշտությունը ներկայացնելու համար: Ի՞նչ էք կարծում Սոչիի հանդիպումների ընթացքում այդ հարցը կարող է շոշափվել, և ի՞նչպիսին կարող է լինել կողմերի արձագանքը դրան:*

Կշռշափվի, թե՛ ոչ, բարդ է ասել: Այդ մասին շատ է խոսվում, մեկ անգամ ևս կրկնեմ, որ Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների հանդիպումը, եթե տեղի էլ ունենա, առաջնահերթ նպատակ պիտի ունենա փորձելու զսպել առկա իրավիճակը, թուլացնել լարվածությունը: Այսինքն քաղաքական կարգավորմանն ընդհանրապես կամ առավել ևս կարգավորման որևէ առանձին տարրի անդրադարձ չի կարող լինել: Եթե մենք խոսում ենք խաղաղապահների մասին, ապա այս հարցը բանակցային սեղանին եղած կարգավորման փաթեթի մի տարր է միայն, այլ ոչ թե առանձին կոմպոնենտ որպես ելալիսին:

Այդ տեսանկյունից, եթե անգամ խաղաղապահների տեղակայման հետ կապված որևէ հարց շոշափվի, չեմ կարծում, որ դա կարվի այն լրջությամբ, որը թույլ կտա այս հարցում փոփոխության ակնկալիք ունենալ:

Բայց կա նաև հարցի երկրորդ մասը, թե որքանով է դա անհրաժեշտ, որքանով է իրատեսական, և որքանով է իրականում արդյունավետ կոնֆլիկտի կարգավորման համատեքստում: Իմ կարծիքով, այս պարամետրերից ոչ մեկով էլ խաղաղապահների տեղակայումը արդարացված չէ: Խոսքը կոնկրետ Ռուսաստանին ու խաղաղապահներ տեղակայելու նրա ցանկությանը չի առնչվում, նույնը կարող եմ ասել նաև այն դեպքի համար, երբ նման ցանկություն ու պատրաստակամություն արտահայտի որևէ այլ կողմ: Փորձեմ շատ արագ մի քանի օրինակներ բերել և բացատրել, թե ինչու դա չի աշխատում:

Առաջին հերթին՝ խաղաղապահ առաքելությունների համաշխարհային փորձը որևէ օպտիմիզմ

չի ներշնչում: Դժվար է ասել, որ խաղաղապահ առաքելությունները կարողացել են իրենց արդարացնել և իրապես խաղաղություն են պարգևել: Եթե մենք նայում ենք նման առաքելությունների կիրառման կոնֆլիկտների դաշտը, մենք ինչ ծայրահեղություն ասես՝ չենք տեսնում, կամ առավելապես ոչ դրական ենք տեսնում:

Երկրորդը բնական բալանսների խնդիրն է: Խաղաղապահ առաքելությունը պիտի լինի շատ բալանսավորված՝ հնարավորինս բացառելով ուժային կենտրոնների և շահեր ունեցող երկրների ներկայությունը: Իսկ այսօրվա համաշխարհային ողջ կոնյուկտուրային նայելով՝ առկա կոնֆլիկտներ, թեժ գոտիներ, ֆինանսատնտեսական վիճակ և այլն, չեմ կարծում, որ իրատեսական է նման ֆորմատի ներքո այսօր որոշակի խաղաղապահ առաքելություն ունենալը: Հակառակ պարագայում, եթե նման առաքելությամբ հանդես չգան համեմատաբար չեզոք երկրներ, այլ օրինակ՝ ուժային կենտրոնները կամ որոշակի շահեր ունեցող երկրներ մեր հարևանների շարքից, ապա դա որևէ կերպ չի լինի խաղաղապահ առաքելություն, դա կլինի որևէ մեկի շահի սպասարկման առաքելություն:

***-Փաստորեն, նպատակահարմար չեք համարում ուժային կենտրոններից որևէ մեկի ներգրավումը հնարավոր խաղաղապահ առաքելությանը: Այդ պարագայում ինչպիսի՞ն է, Ձեր կարծիքով, նրանց՝ հատկապես ԵԱՀԿ ՄԽ համանախագահների դերակատարությունն այսօր ստեղծված լարվածության մեջ:***

Եթե մենք անդրադառնանք նույն ԵԱՀԿ ՄԽ համանախագահներին, որոնք կարգավորման գործընթացում ունեին և ունեն մեծագույն առաքելություն, այսօր փաստում ենք, որ առկա սրացումը սահմաններին, Ադրբեջանի բոլոր տեսակի ոտնձգությունները, դիվերսիաները, սադրանքները և ցինիկ պահվածքն ընդհանրապես էապես բխում են նույն այդ ուժային կենտրոնների, մասամբ նաև համանախագահների կեցվածքից:

Ինչ նկատի ունեմ. օրինակ՝ արևմուտքին պետք է դիվերսիֆիկացված էներգետիկ ուղի, առավել ևս ուկրաինական ճգնաժամի և Ռուսաստանի դեմ սանկցիաների ֆոնին, արևմուտքը սկսեց առավել քան արհեստականորեն, մի կողմ դնելով արժեքային բոլոր խնդիրները, Ադրբեջանի ճակատը շոյել՝ հանուն իր քաղաքական շահի: Առաջին ապրոբացիան Ալինն արեց իր երկրի ներսում՝ ժողովրդավարական բոլոր նորմերի ջախջախման ներքո: Երբ տեսավ՝ արձագանք չի գալիս, որպես երկրորդ քայլ այդ ցինիկությունը սկսեց տարածել նաև կոնֆլիկտի համատեքստում: Հետևաբար այս սրացումների մեջ իրենց պատասխանատվության բաժինն ունեն նաև մեր արևմտյան գործընկերները՝ թե՛ Միացյալ Նախանգները, թե՛ Եվրոպական միությունը:

Ռուսաստանի պարագայում, բազմիցս ասել ենք, որ զենքի՝ հատկապես զանգվածային բնաջնջման զինատեսակների վաճառքը նման թվաքանակով չի կարող ընկալվել միայն որպես բիզնես գործարք: Անգամ, եթե Ռուսաստանը դրա մասին չի մտածում, կամ դա հիմքում չի դնում, դիմացի կողմից դա ունենում է նաև ֆոնային ընկալումներ: Ադրբեջանի կողմից այդ ամենն ընկալվում է այսպես. "Եթե Ռուսաստանը մեզ այսքան զինում է, ուրեմն Հայաստանի հետ իր ռազմավարական գործընկերության նկատմամբ այդքան էլ լուրջ չի վերաբերվումի: Հետևաբար սա մեզ համար գուցե շանս է": Այսինքն՝ Ռուսաստան էլ ներկա ցինիկացման ողջ գործընթացի մեջ իր որոշակի պատասխանատվությունն ունի: Հիմա, եթե այս պայմաններում ներկա դեստրուկտիվ վիճակն ենք տեսնում, ապա ինչ կարող ենք ակնկալ, եթե այս ամենի հետ միասին

դաշտում հայտնվի խաղաղապահի մանդատ ունեցող որևէ մեկը: Բնականաբար՝ որևէ արդյունավետություն սպասել հնարավոր չէ:

Եվ, վերջապես ամենակարևորը, կարծում եմ, որ մենք բոլորս՝ թե՛ այստեղ, թե՛ ԼՂՀ-ում, հասել ենք այն պատկերացմանը, որ մենք մեր անվտանգության որևէ էլեմենտ ուրիշին հանձնելու, վստահելու որևէ էական երաշխիք չունենք: Այսինքն մեր անվտանգությունն ապահովողը բանակն է, որ կանգնած է սահմանին՝ թե՛ այստեղ՝ ՀՀ-ի, թե՛ այնտեղ՝ ԼՂՀ-ի: Մեր անվտանգության երաշխիքը այն տղաներն են՝ փափոք ու պատի՛վ նրանց, ովքեր առաջին պատերազմին մասնակցած այսօր ևս ցանկություն են հայտնում կամավորի կարգավիճակով բարձրանալ սահմանային գիծ, և թե՛ իրենց փորձով, թե՛ անմիջական ներկայությամբ ու հարկ եղած դեպքում նաև մասնակցությամբ իրենց նպաստը բերել՝ երիտասարդների կողքին լինելով: Ես սա եմ հասկանում մեր անվտանգության երաշխիքների դաշտում: Որևէ խաղաղապահի այնտեղ կանգնած, որևէ երկրի քաղաքացու՝ կապ չունի՝ որ, ես այդ կարգավիճակում չեմ պատկերացում: Փորձը ցույց է տալիս, որ անվտանգության խնդիրներում մեր բանակի վրա մեր հույսը դնելու և՛ բարոյական իրավունքն ունենք, և՛ փորձը: Ես չեմ կարծում, որ մենք մեր անվտանգությունը պետք է ինչ-որ մեկի ինչ-որ չափով պատվիրակենք:

*Աղբյուրը՝ **Armedia.am**  
09.08.2014*